

ԲԱՅՐՈՆԸ ԵՎ ՄԻԻԹԱՐՅԱՆՆԵՐԸ

(Մեծ բանաստեղծի ծննդյան 200-ամյակի առթիվ)

Ա. Ա. ԲԵՔԱՐՅԱՆ

Ջորջ Գորդոն Բայրոնի (1788—1824) հարուստ նամականին գրական այն-հուշարձաններից է, որոնք հնարավորություն են ընձեռում խորամուխ լինելու բանաստեղծի անձնական կյանքի և ստեղծագործության ամենանվիրական գաղտնարանների մեջ, հետևելու նրա հասարակական, քաղաքական, գեղագիտական, փիլիսոփայական ու գրական հայացքների ձևավորման ու զարգացման ընթացքին, բազմաթիվ հավաստի տեղեկություններ ստանալու XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին Արևմտյան Եվրոպայում տիրող հասարակական, քաղաքական ու գրական կյանքի վերաբերյալ:

Բանաստեղծի մահվանից վեց տարի անց՝ 1830-ին, անգլիացի ռոմանտիկ բանաստեղծ, Բայրոնի առաջին կենսագիր Թոմաս Մուրը (1779—1852) հրատարակեց նրա նամակների և օրագրերի ժողովածուն¹, որը, չնայած իր ոչ լիակատար լինելուն խոր հետք թողնեց եվրոպական գրականության մեջ, լայնացնելով ժամանակակիցների պատկերացումները բանաստեղծի անձի և ստեղծագործական մտահղացումների վերաբերյալ:

Բայրոնի երկարատև, «ինքնակամ աքսորն» էր նրա նամակներ գրելու շարժառիթը. «Սա շրջահայաց նամակագիր չեմ և սովորաբար գրում եմ այն, ինչ առաջանում է գլխումս տվյալ պահին»², — գրել է Բայրոնը 1822-ին իր նամակներից մեկում³ հասցեագրված հավանաբար Մերի Շելլին³:

Բայրոնի նամականու մեջ իրենց ուրույն տեղն ունեն հայերին և հայ մշակույթին վերաբերող էջերը, որոնցում արտացոլված է այն բացառիկ սերն ու հարգանքը, որ տածել է հանճարեղ բանաստեղծը դեպի հայ ժողովուրդն ու նրա հարուստ մշակույթը: Հայ մշակույթին, պատմությանն ու լեզվին վերաբերող նրա նամակները (թվով տասնչորս)⁴ ուղղված Թոմաս Մուրին և իր ստեղծագործությունների հրատարակիչ Ջոն Մորրեյին (1778—1843), գրվել են 1816—1821 թթ.: Դժվար է գերազնահատել այդ նամակների նշանակությունը: Հիացմունք և զարմանք է պատճառում Բայրոնի կատարած հետազոտությունների բազմազանությունն ու խորությունը: 1816—1818 թթ. ապրելով Վենետիկում, նա իր նամակներում տվել է վենետիկյան կյանքի վառ և մանրամասնություններով լի պատկերը, ներառյալ Վենետիկի Միսթարյանների ծավալած գիտական ու լուսավորչական գործունեության նկարագրությունը: Շփվելով հայ մշակույթի կարկառուն գործիչների հետ, Բայրոնը պատմությանն է թողել արժանահավատության ու նորույթի տեսակետից հազվագյուտ

¹ Th. Moore. Letters and Journals of Lord Byron: with Notices of His Life London, 1830.

² Byron's Letters and Journals. V. I. „In my Hot Youth“. Edited by Leslie Marchand. Cambridge. 1974, Introduction, p. XVIII.

³ Շելլի, Մերի (1797—1851), անգլիացի նշանավոր բանաստեղծ Պ. Բ. Շելլիի (1792—1822) կինը, փիլիսոփա և վիպասան Վիլյամ Գոդվինի (1756—1836) դուստրը:

փաստեր պարունակող և իր տեսակի մեջ միակը հանդիսացող հարուստ նյութ Մխիթարյանների գործունեության վերաբերյալ: Մյուս կողմից, նրա «հայկական» նամակներն ինքնին արժեքավոր և վառ ապացույցն են այն մեծ դերի, որ խաղացել է անգլիացի բանաստեղծը հայ մշակույթը օտարներին ծանոթացնելու գործում:

Մեծ ճանաչման ու համբավի տեր, բազմաթիվ բանաստեղծությունների և պոեմների հեղինակ Ջորջ Գորդոն Բայրոնը իր հայրենիքում անընդհատ ենթարկվելով հալածանքի ու վիրավորանքի՝ հանդուգն էպիգրամների և պառլամենտական ելույթների համար, խորապես դժգոհ իր միջավայրից, 1816-ի ապրիլի 25-ին հեռանում է Անգլիայից, այլևս չվերադառնալու որոշմամբ: Նույն թվականի աշնանը նա ծանոթանում է Մխիթարյանների հետ: «Արևելյան այդ հին ժողովրդի կրոնը, գրականությունը, պատմությունը՝ այս ամենը, հետաքրքրեցին նրան, — գրում է ուսուսանողական գրաքննադատ Յու. Ա. Վեսելովսկին (1872—1919), — իսկ կղզու բնակիչների հեզահամբույր, սրտաբաց վերաբերմունքը է՛լ ավելի կապեց նրան յուրատիպ գաղութին: Նա ավելի հաճախ, քան առաջ, սկսեց այցելել իր նոր ծանոթներին: Եվ մի անգամ չէ, որ դիմակահանդեսի ամենահեռուս պահին, թեթև մակուկը տարել է նրան Ս. Ղազարի խաղաղ մենաստան: Ծիշտ է, այստեղ ամեն ինչ շափազանց հեռու էր կյանքից, բայց, իբրև հակադրություն վենետիկյան եռուզեռին, այս խաղաղությունն ու անդորրը ոչ միայն տհաճ չէին թվում, այլև երբեմն ուղղակիորեն բերկրանք էին պատճառում խոնջացած բանաստեղծին»⁴: Այդ մասին է վկայում նաև Բայրոնի 29 օգոստոսի 1819 թվակիր նամակի վերաբերյալ Թ. Մուրի տված ծանոթագրությունը: Խոսելով Բայրոնի գործունեության իտալական շրջանի մասին, Թ. Մուրը գրում է. «Ամբողջ ձմեռ, ամեն առավոտ նա դուրս էր գալիս, մակուկով մենամենակ ճեղքում էր ջուրը՝ հայոց կղզի գնալու համար (կղզյակ մի խաղաղ լճակի մեջ և Վենետիկից մոտավորապես կես լյո հեռու), գնում էր վայելելու տեղի գիտուն և հյուրասեր վանականների ընկերակցությունը, սովորելու նրանց դժվարին լեզուն: Իսկ երեկոյան, դարձյալ մակուկով, վերադառնում էր, հյուր գնում, սակայն մի երկու ժամով միայն»⁵:

Բայրոնը մտերմանում է Մխիթարյանների հետ, սիրում նրանց ձեռնարկած գործը և նպատակը, հայոց հին լեզուն և մատենագրությունը: XVIII դարի սկզբներին, երբ հայերը տառապում էին մի կողմից սուլթանական Թուրքիայի, իսկ մյուս կողմից շահական Պարսկաստանի լծի տակ, Վենետիկից ոչ հեռու գտնվող Ս. Ղազար փոքրիկ կղզին թերևս միակ վայրն էր աշխարհում, որտեղ ազատ ու անկաշկանդ հնչում էր հայոց լեզուն և հանգամանորեն ուսումնասիրվում հայ հինավուրց մշակույթն ու գրականությունը: Հայրենիքից հեռու գտնվող այդ գողտրիկ կղզյակի Ս. Ղազար մայրավանքում եվրոպական քաղաքակրթությունից հոգնած բանաստեղծը սկսում է ուսումնասիրել հայերեն՝ երազելով ներթափանցել արևելյան պոեզիայի գաղտնարանները: «Կարևորը այն չէ, — գրում է հայ անվանի գրող Խաչիկ Դաշտենցը, — թե Բայրոնը որչափով է սովորել հայերենը: Կարևորը երևույթն է, այն ջերմ համակրանքը, որ նա տածել է մեր երկրի պատմության ու գրականության հանդեպ, այն խանդավառ հափշտակությունը, որ նա ամեն օր Ադրիականի փոթորկոտ ջրերը ճեղքելով գնացել է հայոց կղզին, մի ազնիվ նպատակով համակված՝ սովորելու լեզուն»⁶:

Բայրոնը հայերեն սովորելու նպատակով ստիպված է եղել ամեն օր առավոտյան գնալ Ս. Ղազար, իսկ երեկոյան վերադառնալ Վենետիկ, քանի որ Մխիթարյան միաբանության խստաբարո հայերը չեն թույլատրել բանաստեղծին ժամանակավոր բնակություն հաստատել վանքում: Այդ մասին համապատաս-

⁴ Ю. Веселовский. Очерки армянской литературы, истории и культуры. Ереван, 1972, с. 393.

⁵ Th. Moore. Letters and Journals of Lord Byron: with Notices of His Life. In four volumes, Paris, 1831, v. III, p. 322.

⁶ Լ. Գալտեյնյ. Բայրոնը և հայերը. Երևան, 1959, էջ 174:

խան գրառում կա 2. Ավգերյանի «Խնքնապատում օրագրությունում»։ «Lord Byron գերահռչակ և աշխարհաքարոզ բանաստեղծ Անգլիացի՝ զորոյ զգրուածս դնէին ի կշիռ ոսկւոյ, եկեալ ի տեսութիւն վանացս՝ խնդրեաց ուսանել ի նմանէ զՀայկական բարբառ. և կամէր ևս բնակել ի վանս։ Բայց քանզի ոչ որ ի Միաբանից ճանաչէր զնա ցայնժամ, ասացաւ նմա գալ ի Վենետիկոյ զօր ամենայն, և այնպէս ուսանել։ Եւ նա սկսաւ գալ աւուրս յիսուն և ուսանէր ժամս երկուս կամ երիս, մանավանդ թէ անցուցանէր ի զրոյցս ի սփոփանս անձին։ Էր նա երկտասարդ աշխոյժ, զուարթաբարոյ և բոցակն. և թէպէտ կաղ էր միով ոտամբ, բայց գեղեցիկ էր դիմօքս⁷։

Բայրոնի հայերենի ուսուցիչը՝ Հարություն Ավգերյանը, մի ընդարձակ, հատուկ սրահ էր հատկացրել բանաստեղծին։ Այն մինչև օրս էլ կրում է «Բայրոնի սենյակ» անվանումը։ Եվ հենց այդ սրահում, որը ճշնում էր արևելքով ու հնույնամբ⁸, սկսվեցին Բայրոնի հայերենի առաջին դասերը։

Մեր կատարած հետազոտությունները բերում են այն եզրահանգման, որ Բայրոնի նամակների միջոցով է անգլիախոս ընթերցողը առաջին անգամ ծանոթանում դեռևս XVIII դարի սկզբից ողջ Եվրոպայում մեծ համբավ ու հռչակ վայելած հայագիտական խոշոր կենտրոնի՝ Վենետիկի Մխիթարյանների գիտական ու լուսավորչական աշխատանքին և գաղափար կազմում նրանց այնպիսի կարկառուն դեմքերի մասին, ինչպիսիք են Հարություն Ավգերյանը (1774—1854), Ազոնց Գյուլիեր (1740—1824), Սարգիս Թեոդորյանը (1783—1877), Սուքիաս Սոմալյանը (1776—1846) և ուրիշներ։ Բայրոնը սկսում է կանոնավոր հաճախել Ս. Ղազար կղզին և ուսումնասիրել հայոց լեզուն։

1816-ի դեկտեմբերի 4-ին Մըրրեյին ուղղված նամակում Բայրոնը հայտնում է հայերենի իր ուսումնառության ընթացքի և այն բացառիկ արժեքավոր տեղեկությունների մասին, որ նա ստացել է հայ գրականության, հայ ժողովրդի բարքերի ու սովորությունների վերաբերյալ։ Նա հիացել է հայ վանական գիտնականների բանիմացությամբ, քաջատեղյակությամբ, կրթվածությամբ և իրենց ժողովրդի լուսավորության համար կատարած խոշոր աշխատանքներով. «...սկսել և շարունակում եմ հայոց լեզվի ուսումնառությունը, որին տիրապետում եմ հնարավորություններիս սահմաններում,— գրում է Բայրոնը այդ նամակում,— ամեն օր գնում եմ հայկական վանք դասեր առնելու մի գիտնական վանականից և որոշ բացառիկ ու օգտակար տեղեկություններ եմ արդեն ձեռք բերել արևելյան այդ ժողովրդի գրականության և սովորությունների մասին։ Նրանք այստեղ ունեն հաստատություն՝ եկեղեցի և իննսուն վանականից բաղկացած միաբանություն։ Նրանցից ոմանք շատ ուսյալ և կիրթ մարդիկ են։ Ունեն նաև տպարան և մեծ ջանքեր են գործադրում իրենց ազգը լուսավորելու համար»⁹։

Հանգամանքների բերումով ստեղծված կյանքի դժվարին և յուրատեսակ պայմաններում բանաստեղծը ապրում է հանդիպումների ու մտերմությունների անսպասելի մի շրջանակում, որը նրան պարգևում է նոր տպավորություններ և զգացմունքներ։ Այս պայմաններում էլ նա կարողանում է փնտրել ու գտնել իր հետաքրքրասիրությունը բավարարող ոլորտ։

Հարություն Ավգերյանը բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ է տվել Բայրոնին հայ ինքնուրույն և թարգմանական գրականության վերաբերյալ։ Թարգմանությունները, որոնք հիմնականում կատարվում էին հունարենից, պարսկերենից, ասորերենից և լատիներենից, նպաստել են հայ մատենա-

⁷ Ղ. Տալան. Լորտ Պայրոն ի Ս. Ղազար.—«Բազմավեպ», 1924, № 4, էջ 135, 136։

⁸ Ю. Веселовский. Указ. соч., с. 395.

⁹ Th. Moore. The Life, Letters and Journals of Lord Byron. London, John Murray, 1908, p. 333 (այսուհետև՝ Th. Moore, 1908).

գրություն զարգացմանը՝ հանդիսանալով նրան սնուցող հիմնական աղբյուրներից մեկը: Համաշխարհային մշակույթի ուսումնասիրության համաձայն՝ մեծ արժեք ներկայացնող շատ գրական հուշարձաններ պահպանվել են միմիայն գոյություն ունեցող հայերեն թարգմանությունների շնորհիվ: Այդ մասին Բայրոնը հիշատակում է վերոհիշյալ նամակում, որտեղ մասնավորաբար նշում է, որ «վանքում կան մի շարք չափազանց հետաքրքիր ձեռագրեր, գրքեր, ինչպես նաև թարգմանություններ այժմ կորած հունարեն բնագրերից, նաև Վյուրսկերենից, ասորերենից և այլն, չհաշված իրենց ժողովրդի բնիկ երկերը»¹⁰:

Ուշագրավ է, որ Բայրոնի քնարերգության այս շրջանը, երբ բանաստեղծը բուն ոգևորությամբ տարված էր հայերենով, հայ գրականությամբ և մշակույթով, նշանավորվում է վառ ու համարձակ քնարական նորարարությամբ («Մանֆրեդ», «Տասույի գանգատը», «Չայլդ Հարոլդի ուխտագնացության» վերջին նվագը, «Սարդանապալ», «Կայեն» և այլն): Նամակների սեղմ տողերի մեջ զգացվում է ոչ միայն բանաստեղծի ջերմ ու հարգալից վերաբերմունքը հայ վանական-գիտնականների նկատմամբ, այլև, որ պակաս արժեքավոր չէ, ուրվագծվում են նրանց բնավորությունն ու էությունն ի ցույց դնող, բանաստեղծական խորաթափանցությամբ դիտված բնորոշ մանրամասներ:

1816-ի դեկտեմբերի 27-ի նամակում՝ ուղղված Մլրրեյին, բանաստեղծը գրում է. «Հայրերի առաջնորդը եպիսկոպոս է, մի հրաշալի ծերունագարդ մարդ՝ ասուպած և մորուքով: Հայր Պասկալը նույնպես զարգացած ու բարեպաշտ մարդ է»¹¹: Այստեղ խոսքը վերաբերում է արքահայր Ազոնց Գյուլվերին և Հարություն Ավգեյանին, որին Բայրոնը սիրում էր անվանել «հայր Պասկալ»: Այստեղ արժե հիշատակել, որ Ազոնց Գյուլվերը, անխոնջ գործունեության, ճկուն դիվանագիտական քաղաքականության, գիտելիքների խիմարության, հմուտ վարվելակերպի և ճարտասանության շնորհիվ, կարողացավ սերտ կապերի մեջ մտնել զանազան երկրների թագավորների, կայսրերի, իշխանությունների հետ և խոսքով ու գործով ապացուցել նրանց, որ Մխիթարյան միաբանությունը վանական-գիտնականների մի միաձուլվ ընտանիք է, ազգային մշակույթի զարգացման կենտրոն¹², որի գլխավոր նպատակն է հավաքել և կորստից փրկել ամենուր սփռված հայկական ձեռագիր մատյանները, հրատարակել հայ մատենագիրների, պատմիչների, տաղերգուների գործերը, ինչպես նաև լուսավորչական աշխատանք ծավալել ազգի մեջ: Այցելելով Ս. Ղազար, Բայրոնը օրըստօրե ավելի է ոգևորվում «Հայոց կղզով», սիրում ու հարգում հայ ազգը, հետաքրքրվում նրա պատմությամբ ու մշակույթով: Անշուշտ, այս գործում իր համեստ ներդրումն ունի Հարություն Ավգեյանը՝ Բայրոնի խոսքերով ասած ադ «զարգացած ու բարեպաշտ մարդը»: Ավգեյանի շնորհիվ Վենետիկում անցկացրած երեք տարիները (1816—1818) Բայրոնի համար դարձել են գիտական համագործակցության բեղուն շրջան: Նրանք միասին պատրաստել և հրատարակել են անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն քերականության ձեռնարկները և անգլերեն-հայերեն բանաստեղծական Բացի դրանից Բայրոնը կատարել է որոշ թարգմանություններ հայ մատենագրությունից, որոնք նրա նամակներից քաղված առանձին հատված-

¹⁰ Նույն տեղում, էջ 329:

¹¹ Նույն տեղում, էջ 335:

¹² Ազոնց Գյուլվերի օրոք նապոլեոն Բոնապարտը սպառնում էր ուրիշ միաբանությունների հետ միասին ընաչնչել նաև Մխիթարյաններին: Սակայն Ազոնց Գյուլվերը, որի համբավը իբրև գիտնական-եկեղեցականի տարածված էր արդեն Ուրոպայի արքունիքներում և մեծ եկեղեցական աթոռներում, կարողացավ Մխիթարյան միաբանությունը ներկայացնել որպես Ակադեմիական հաստատություն: Նապոլեոնը ընդունեց այս բացառիկ երևույթը և կայսերական հրամանագրով Ս. Ղազար մենաստանը հռչակեց անձնամխելի և վախճանական բոլոր պաշտոնական թղթերի և գիտական հարաբերությունների մեջ, Մխիթարյան միաբանությունը կոչվում էր մերթ Համալսարանական հաստատություն, մերթ Հայկական ուսումնասիրությունների գիտական ճեմարան (տե՛ս Վ. Ղազար. Մխիթարեան մայրավանք, Վենետիկ, Ս. Ղազար, 1966, էջ 86):

ների և այլ արժեքավոր փաստաթղթերի հետ մեկտեղ Մխիթարյանները ամփոփել են 1870-ին Ս. Ղազարում տպագրված (իսկ 1907 թ. վերադրատարակված «Lord Byron's Armenian Exercises and Poetry» խորագիրը կրող ժողովածուի մեջ (անգլերեն և հայերեն):

Բայրոնի 1816—1818 թթ. «հայկական» հանդիպումները նպաստեցին թե՛ Բայրոնի, թե՛ Մխիթարյանների փառքի տարածմանը ամբողջ եվրոպայում: Այստեղ արժե նշել, որ Հ. Ավգերյանը հետագայում ծանոթացել և բարեկամություն է հաստատել երկու ուրիշ անգլիացիների՝ էդուարդ Լոմբի և Ջոն Բրանդի հետ, որոնց նույնպես սովորեցրել է հայերեն: Առաջինն օգնել է նրան հայերեն-անգլերեն քերականության ձեռնարկի (1819) հրատարակման գործում, իսկ Ջ. Բրանդի օժանդակությամբ և աջակցությամբ Հ. Ավգերյանը հրատարակել է անգլերեն-հայերեն (1820), հայերեն-անգլերեն բառարանները (1825), որոնք արժեքավոր են ու թեև գրաբար, այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը:

Այսպիսով Ջ. Գ. Բայրոնի շնորհիվ հայոց լեզուն և հայ մշակույթը մտան եվրոպացիների հետաքրքրությունների շրջանակի մեջ, Բայրոնի և Մխիթարյանների հանդիպումները առիթ հանդիսացան, որ Ս. Ղազար այցելեն բազմաթիվ օտարերկրացիներ¹³ և, ինչպես նշում է Բայրոնի հայոց լեզվի ուսուցիչը, «ի սակս ուսանելոյ նորա ի վանս՝ հռչակեցաւ և անուն վանացս»¹⁴:

Բայրոնի և Մխիթարյանների միջև եղած մտերմության վկայությունն են Մկրտիչ Ավգերյանի (1762—1854) Ագոնց արբահորը ուղղված 1817-ի փետրվարի 15-ի նամակի հետևյալ տողերը. «Ուրախ եմք ընդ բարի բարի խորհուրդս լօրտին»¹⁵, իսկ Ղուկաս Ինճիճյանը (1758—1833) 1817-ին Կ. Պոլսից Ագոնց արբահորը խնդրում է, որ նա առաջարկի Բայրոնին «... գրել ինչ անգրեթէն ի վերայ Միաբանութեան մերոյ, զոր ինչ ետես աչօք, թէ զինչ նպատակ ունի Միաբանութիւն մեր, և զինչ գանձ արեւելեան ձեռագրաց ժողովեալ ունի ի մենաստանի և այլն...»¹⁶ և ավելացնում, որ խորհրդականները, իմանալով Բայրոնի Ս. Ղազար կատարած այցելությունների մասին, Ազգային ժողովում նպաստավոր դիրք են բռնել Մխիթարյան միաբանության հանդեպ: Չնայած Բայրոնի նամակների հակիրճությանը, դրանց մանրազնին ուսումնասիրությունը ի հայտ է բերում նաև Մխիթարյանների բազմակողմանի գործունեության մի այլ բնագավառ: Այն է՝ հայ պատանիների կրթման ու դաստիարակման գործը: 1817-ի հունիսի 8-ին Ջոն Մըրրեյին հասցեագրած նամակում Բայրոնը գրում է. «Այս նամակը պաշտոնապես Ձեզ կհանձնեն երկու հայ վանականներ, որոնք Անգլիայով ուղևորվում են Մադրաս: Եթե որևէ բանով կարող եք օգտակար լինել նրանց՝ ծովայինների կամ էլ Արևելյան Հնդկաստանի Ձեզ ծանոթ անձանց միջոցով, ապա ես ավելի քան երախտապարտ կլինեմ... Նրանց անուններն են հ. Սուքիաս Սոմալյան և հ. Սարգիս Քեոդորոսյան: Խոսում են իտալերեն, հավանաբար ֆրանսերեն և մի քիչ էլ անգլերեն: Կրկին հիշեցնում եմ խնդրանքս, հարգանքներով միշտ Ձեր՝ Բայրոն:

Գուցե կարողանաք օգնել նրանց ուղևորությանը, տալով կամ ձեռք բերելով հանձնարարականներ՝ Հնդկաստանում ներկայացնելու համար»¹⁷:

¹³ Բայրոնից հետո Ս. Ղազար են այցելել այնպիսի նշանավոր մարդիկ, ինչպիսիք են Ք. Մուրը (1819), Վ. Ֆլորիվալը (1828), Վ. Սկոտը (1832), Հ. Պետերմանը (1833), Ա. Մյուսեն (1834), Ժ. Սանդը (1834), Է. Քեյլորը (1851), Ժ. Օֆենբախը (1870), Է. Դուգեն (1886) և շատ ուրիշներ:

¹⁴ Ղ. Տ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 136:

¹⁵ Նույն տեղում, էջ 137:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ T. H. Moore, 1908, p. 158.

Հետազոտություններից պարզվում են Ս. Սումալյանի և Ս. Թեոդորյանի Հնդկաստան կատարելիք այցի դրդապատճառները, որոնք ինքնին վկայություն են այն փաստի, որ Մխիթարյաններին մշտապես մտահոգել է նաև հայազգի զավակների կրթման կարևոր ու հայրենասիրական գործը։ Ինչպես հայտնի է, եռանդուն ջանքերի շնորհիվ նրանք ստեղծել են վարժարաններ, որոնք իրենց ազգապահպան գործունեությամբ երկար տարիներ լույս են սփռել հայ գաղթավայրերում։ Հնդկահայ մեծահարուստներ էդուարդ Ռաֆայելի Ղարամյանը (1730—1795) և Սամվել Մկրտչի Մուրադյանը (1760—1815) Մխիթարյան միաբանությանն են կտակում գումար՝ հայազգի զավակների կրթման վարժարաններ բացելու նպատակով։ Ս. Թեոդորյանը և Ս. Սումալյանը կտակարարների որդիների հետ բանակցություններ վարելու և կտակները ձեռք բերելու նպատակով 1817-ի հունվարի 16-ին մեկնել են Մադրաս՝ լիազորված ոչ միայն Ս. Ղազար վանքի բոլոր վարդապետների ստորագրությամբ վավերացված փաստաթղթերով¹⁸, այլև տարաշխարհիկ ժողովրդի ճակատագրով հետաքրքրվող անգլիացի բանաստեղծի հանձնարարական նամակով՝ ուղղված Զոն Մորրեյին։

Բայրոնի նամակում հիշատակվող Ս. Սումալյանը, արբահայր ընտրվելուց հետո, վարդապետների մի խմբի հետ միասին հավաքում է մայր վանքի մեջ պահվող հայկական ձեռագրերը, համեմատել է տալիս թարգմանական ձեռագրերը բնագրերի հետ և պատմական մեկնություններով, անհրաժեշտ ծանոթագրություններով, առաջաբանով հրապարակում դրանք։ Ս. Սումալյանի ջանքերի շնորհիվ լույս է տեսել հիսունից ավելի ձեռագիր։ Նա, կարելի է ասել, առաջինն էր, որ փորձեց եվրոպացիներին ծանոթացնել հայ գրականությանը։ Լինելով ոչ միայն հմուտ բանասեր, այլև թարգմանիչ և բառարանագիր, նա իտալերեն հրատարակել է «Ուրվագծեր հայ գրականության» (1820), «Սեր նախնիների թարգմանությունների մատենագիտական ցանկը» (1825) աշխատությունները, կազմել է անգլերեն-հայերեն-թուրքերեն, հայերեն-անգլերեն-թուրքերեն և թուրքերեն-անգլերեն-հայերեն եռահատոր բառարանը (1843), ինչպես նաև հայերեն-անգլերեն և անգլերեն-հայերեն բառարանները։ Ս. Սումալյանի օրոք Ս. Ղազարում հիմք դրվեց օտար լեզվի ուսուցմանը, և որ ամենահիշարժանն է, բացվեցին Ռաֆայելյան և Մուրադյան վարժարանները՝ ի հիշատակ մադրասցի բարեգործների։ Բայրոնի նամակը հայ վարդապետների մերաբերյալ՝ ուղղված Զ. Մորրեյին, ինչպես նշվեց, թվագրված է 8 հունիսի 1817։ Ուսումնասիրելով է. Ղարամյանի և Ս. Մուրադյանի կտակների ձեռք բերման պատմությունը, պարզում ենք, որ երկու հայ վարդապետները Ս. Ղազարից Հնդկաստան են մեկնել 1817-ի հունվարի 16-ին¹⁹։ Այս փաստը մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ Բայրոնի վերոհիշյալ նամակը ամենայն հավանականությամբ թվագրված է եղել 8 հունվարի 1817, սակայն ըստ երեւյթի՝ Բայրոնի նամակների և օրագրերի առաջին հրատարակության մեջ Թ. Մուրը թյուրիմացաբար նշել է 8 հունիսի 1817։ Այդ թյուրիմացությունը հետագայում տեղ է գտել մյուս հրատարակություններում։

Բայրոնի 27 հունվարի 1818 թվակիր նամակում՝ ուղղված Զ. Մորրեյին հետաքրքիր հիշատակություն կա նվաճելու Կեսարացու (260 և 265 միջև—338

¹⁸ Տե՛ս Սամուել Մուրատեան. ազգային մեծ բարերար.—«Բազմավեպ», 1936, № 8—12, էջ 181։

¹⁹ Նշենք, որ Ս. Սումալյանի և Ս. Թեոդորյանի այդ առաքելությունը ավարտվեց անհաջողությամբ։ Հետագայում Ս. Թեոդորյանը նորից է մեկնել Հնդկաստան և բազմաթիվ շարժարաններից, արկածներից ու դժվարություններից հետո նրան հաջողվել է ձեռք բերել է. Ղարամյանի և Ս. Մուրադյանի կտակներով նախատեսված նվիրատվությունը, որի շնորհիվ բացվեցին Մուրադյան (1834-ին Պազուլում) և Ռաֆայելյան (1836-ին Վենետիկում) վարժարանները։ (Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Մուրատ-Ռաֆայելյան վարժարաններու բարերարներն և իրենց կտակները.—«Բազմավեպ», 1936, № 8—12, էջ 167—196։ Վ. Զարդարյան. Հիշատակարան (1512—1933). Գահիրե, 1934, Գ. հատոր, էջ 111—115)։

կամ 339) «Քրոնիկոնի» լատիներեն թարգմանության մասին: Քճանի որ Եվսերիոսի վաղուց կորած և վերջերս գտնված բնագրի հատվածների հայ թարգմանիչները հաճությամբ ինձ տրամադրեցին դրա հայտագիրը,—գրում է Բայրոնը այդ նամակում,—ներդիր ուղարկում եմ Ձեզ վեց օրինակ և խնդրում բաժանորդներ գտնել երկու համալսարաններում²⁰, ինչպես նաև գիտունների և տգետների այն շրջաններում, որոնք կցանկանային թոթափել իրենց անգիտությունը: Այս են խնդրում Նալեֆ (վանքը), խնդրում եմ ես, նույնը բարեհաճեցեք խնդրել Դուֆ ուրիշներին²¹:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Բայրոնի հիշատակած «Քրոնիկոնից» բացի Մխիթարյանները եվրոպական գրական հասարակայնությանը լատինիերեն թարգմանությամբ ներկայացրին նաև Հովհան Ոսկեբերանի (մոտ 346—407) և Եփրեմ Ասորու (ծն. թ. անհայտ է — 373) աշխատությունները, Փիլոն Երալյեցու (մոտ մ. թ. ա. 25 թ.—մոտ 50 մ. թ.) ճառերը և ավլ աշխատություններ, որոնք չունենին բնագրային տարբերակ:

Անդրադառնալով միայն Եվսերիոսի պատմագրական երկերից առաջինի՝ «Քրոնիկոնի» լատիներեն թարգմանությանը: Վերջինիս հունարեն բնագիրը կորել է, պահպանվել են միայն առանձին քաղվածքներ հույն պատմիչների երկերում: Հիերոնիմոս Երևելին (մոտ 340—420) «Քրոնիկոնի» պահպանված հատվածների մի մասը թարգմանել է լատիներեն՝ ավելացնելով բազմազան պատմական տեղեկություններ արևմտաեվրոպական հեղինակների աշխատություններից: Սակայն եվրոպացի պատմաբանների մոտ նրա աշխատանքը առանձնակի ուշադրության չարժանացավ, քանի որ Հիերոնիմոսը, իր իսկ խոստովանությամբ՝ արված աշխատության առաջաբանում, հանդես է եկել ոչ միայն Եվսերիոսի երկի թարգմանիչ, այլև՝ ստեղծագործող, իսկ դա, բնականաբար, իջեցրել է կատարված աշխատանքի պատմական արժանահավատության և ճշմարտացիության աստիճանը:

Մինչդեռ, պահպանված հին հայերեն թարգմանությունը (մոտ V դար), որը միայն XVIII դարի 80-ական թթ. հայտնաբերեց հայ լեզվաբան և բանասեր Գևորգ Դպիր Պալատցին (Տեր-Հովհաննիսյան, 1737—1812), անթերի է և ավելի մոտ բնագրին, ներշնչում է վստահություն և բավարարում գիտական պահանջներին: Մկրտիչ Ավգերյանը «Քրոնիկոնի» գրաբար տարբերակը թարգմանում է լատիներեն և 1818-ին Վենետիկում հրատարակում այն՝ լատիներեն թարգմանության, ծանոթագրությունների, հունարեն բնագրի պահպանված հատվածների հետ մեկտեղ²²: Հետազոտությունները բերում են այն եզրահանգմանը, որ Բայրոնի նամակում հիշատակված լատիներեն թարգմանությունը պատկանել է Մ. Ավգերյանին:

Ջոն Մլրրեյը հավանաբար չի ուղարկել հայկական Եվսերիոսի բաժանորդների ցուցակը, որովհետև Բայրոնի 1818-ի ապրիլի 11-ին նրան ուղղված նամակից տեղեկանում ենք. «Ինչո՞ւ չուղարկեցիք նամակիս պատասխանը և հայկական Եվսերիոսի թարգմանության բաժանորդների ցուցակը, որի հայտագրի օրինակները (Ֆրանսերեն) ուղարկեցի Ձեզ երկու ամիս առաջ: Արդյո՞ք

²⁰ Խոսքը Քեմբրիջի և Օքսֆորդի համալսարանների մասին է:

²¹ Th. Moore, 1908, p. 372.

²² Այդ նույն ժամանակ Միլանի Ամբրոջյան գրադարանի գրադարանապետ Անջելո Մալո (1782—1854) և կոստանդնուպոլսեցի գիտնական-վարդապետ Հովհաննես Ջոհրաբյանը (1760—1829) Միլանում հրատարակում են «Քրոնիկոնի» իրենց կատարած լատիներեն թարգմանությունը՝ առանց հայերեն տարբերակի: Մ. Ավգերյանը իր աշխատության առաջաբանում մեղադրել է Հ. Ջոհրաբյանին այն բանում, որ նա, հակառակ Մխիթարյան միաբանության սահմանած կանոնների, հրատարակել է միաբանության սեփականությունը համարվող գրչագիրը (տե՛ս Գ. Շրոուպֆ. Ուսումնասիրությունը հայ լեզուի և մատենագրության յ'Արևմուտս (ԺԴ—ԺԹ դար), Թարգմ. և լրաց. Գ. Զարբհանյանի. Վենետիկ, 1895, էջ 115):

ստացել եք նամակս. կողարկեմ մեկ ուրիշը: Դուք չպետք է անուշադրութեան մատնեք իմ հայերին»²³:

Բայրոնի նամակներից որոշակի տեղեկություններ ենք քաղում նաև XVIII—XIX դդ. Արևմտյան Եվրոպայում (հատկապես Անգլիայում և Ֆրանսիայում) հայագիտության զարգացման պատմության առանձին դրվագների վերաբերյալ: Այսպես, 1817-ի հունվարի 2-ի նամակում՝ ուղղված Զոն Մըրրեյին, Բայրոնը հիշատակում է, որ «շատ տարիներ առաջ Վիստոնները Անգլիայում հրատարակեցին «Հայոց պատմություն» բնագիրը՝ իրենց իսկ լատիներեն թարգմանության հետ մեկտեղ»²⁴: 1695-ին Ամստերդամում հայ մատենագիր և հրատարակիչ Ղուկաս Վանանդեցին տպագրեց Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», որից հետո եվրոպացի արևելագետները սկսեցին ավելի մեծ հետաքրքրություն ցուցաբերել հայ ազգի և նրա պատմության նկատմամբ: «Մինչ այդ,—գրում է հայ անվանի պատմաբան Լեոն,—հայ ազգը ներկայացել էր եվրոպացուն կամ իբրև կրոնական մի համայնք, որ ուներ դավանական իր առանձնահատկությունները, կամ թե իբրև հմուտ և ճարպիկ և միևնույն ժամանակ տգետ վաճառական, որի ասածներին հավատ չէր ընծայվում: Խորենացին, Ամստերդամում վերածնվելով, գնաց ցույց տալու արևմուտյան աշխարհին, թե հայերը մի հին պատմական ազգ են, կարևոր դեր են կատարել Արևելքի քաղաքական աշխարհում, շփվելով Ասորեստանի, Պարսկաստանի, Հռոմի և Բյուզանդիայի հետ»²⁵: Եվ եվրոպացի գիտնականները հետաքրքրվում, իրենց ուսումնասիրությունների նյութ են դարձնում նաև հայ պատմահոր «Հայոց պատմությունը»: Խորենացին, օրինակ, աղբյուր է դառնում գերմանացի գիտնական Յ. Շրյոդերի (1680—1756) լեզվաբանական և պատմական ուսումնասիրությունների համար: Նամակագրություն է սկսվում ֆրանսիացի հայագետ Լա-Կրոզի (1661—1739) և անգլիացի Վիստոն եղբայրների²⁶ միջև՝ դարձյալ Խորենացու առնչությամբ: Վիստոն եղբայրները, ինչպես հիշատակված էր Բայրոնի նամակում, լատիներեն թարգմանեցին «Հայոց պատմությունը», ինչպես նաև Անանիա Շիրակացու «Աշխարհացոյցը» և դրանք, հայերեն բնագրի հետ մեկտեղ, 1736-ին հրատարակեցին Լոնդոնում՝ Կարոլոս Ակքերս տպագրիչի մոտ: Խորենացու աշխատության հրատարակման շնորհիվ հայերը տեղ գրավեցին նաև անգլիացի գիտնական Էդուարդ Գիբոնի (1737—1794)՝ XVIII դարի վերջերին գրած «Հռոմեական կայսրության անկման և կործանման պատմությունը»²⁷ հանրահայտ պատմական աշխատության մեջ: Այս աշխատությունը, որն իր արժանի տեղն էր գրավում Բայրոնի անձնական գրադարանում՝ իր կենդանի շարադրանքով և սկզբնաղբյուրների մշակման որակով համարվում է XVIII դարի երկրորդ կեսի լավագույն պատմական աշխատությունը, որը թարգմանվել է գրեթե բոլոր եվրոպական լեզուներով:

Ընդհանրապես Բայրոնի անձնական գրադարանը պարունակում էր արևելագետ հայտնի ճանապարհորդների գրքերը, որոնք նա կարդում էր մեծ հափրշտակությամբ ու հետաքալում բազմիցս բանավեճի մեջ մտնում դրանց հեղինակների հետ «Զայլդ Հարովդի ուխտագնացության» առաջին և երկրորդ նվագների, ինչպես նաև «Արևելյան պոեմների» վերաբերյալ տված իր ծանոթագրություններով: Բանաստեղծի հետաքրքրությունը նմանատիպ գրա-

²³ Th. Moore, 1908, p. 377, 378.

²⁴ Նույն տեղում, էջ 386:

²⁵ Լեոն. Նրկերի ժողովածու, տասը հատորով. հ. III, Երևան, 1969, էջ 466:

²⁶ Զորչ և Վիլյամ Վիստոնների հայրը՝ Վիստոն, հնգկահայ մեծահարուստ Գրիգոր Աղափիրյանի որդիների ուսուցիչն է եղել: Վ. Վիստոնը Հնդկաստանում է սովորել հայերեն և վերադառնալով Լոնդոն այն սովորեցրել իր որդիներին: Վիստոն եղբայրները հետագայում ինքնուսուցմամբ այնքան են խորացել հայերենի մեջ, որ կարողացել են լատիներեն թարգմանել և հրապարակել Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և Անանիա Շիրակացու «Աշխարհացոյցը»:

²⁷ Э. Гиббон. История упадка и разрушения Римской империи. СПб., 1883.

կանության հանդեպ չի նվազել նրա ողջ կյանքի ընթացքում: Բայրոնը հնարավորություն ուներ արևելյան երկրների մասին տեղեկություններ քաղել այն ժամանակվա պարբերական մամուլից²⁸, որտեղ լինում էին ինչպես ճանապարհորդությունների նկարագրություններ, գրականության և արվեստի տեսություններ, այնպես էլ արևելյան պոեզիայի և արձակի նմուշներ: Իր հետավոր բարեկամ, գրող Ռոբերտ Դալլասին (1754—1824) ուղղված 1808 թ. հունվարի 21-ի նամակում Բայրոնը գրել է. «Ինչ վերաբերում է ընթերցանությանը, ես առանց չափազանցանելու կարող եմ ասել, որ պատմության բնագավառից կարդացել եմ բավական շատ: Քիչ կգտնվեն ժողովուրդներ, որոնց պատմությանը ես փոքր-ինչ ծանոթ չլինեմ՝ Հերոդոտոսից մինչև Գիբոնս»²⁹: Այս տողերը վկայում են այն մասին, որ Բայրոնը հայ ժողովրդի պատմությանը ծանոթ է եղել առնվազն 1807-ից, քանի որ այդ թվականին հրատարակված Գիբոնի վերահիշյալ աշխատությունը բանաստեղծի անձնական գրադարանում էր: Գիբոնի գրքում տեղ գտած Բյուզանդիայի նկարագրությունը ուժեղացրեց Բայրոնի համերկացիների ուշադրությունը Արևելքի նկատմամբ, իսկ Բայրոնի համար այդ գիրքը երկար տարիներ մնաց իբրև խորհրդածությունների և բանավեճի առարկա: 1823-ին բանաստեղծը Իտալիայից Հունաստան մեկնելիս իր հետ է վերցնում նաև Գիբոնի «Պատմությունը»:

Բայրոնի «հայկական» նամականին խոսում է նաև այն մեծ հետաքրքրության մասին, որ ցուցաբերել են օտարազգի գիտնականները հայոց լեզվի նկատմամբ: Այսպես, 1816 թ. դեկտեմբերի 5-ին Թ. Մուրին ուղղված նամակից տեղեկանում ենք, որ դրանից շուրջ տարի առաջ ֆրանսիացիները հիմնեցին մի հայկական ամբիոն: Նրկուշաբթի առավոտյան ներկայացան քսան աշակերտ՝ լի ազնիվ եռանդով, սրտաբաց երիտասարդությամբ և անզուգական աշխատասիրությամբ: Նրանք իրենց ազգին և աշխարհակալ հաղթության արժանի քաջություններով դիմացան մինչև հինգշաբթի: Այնուհետև այբուբենի քսանվեցերորդ տառի վրա, նրանցից տասնհինգի ուժերը սպառվեցին»³⁰: Այստեղ խոսքը 1811 թ. փետրվարի 15-ին Նապոլեոն Բոնապարտի հատուկ հրովարտակով Փարիզի արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցում հայոց լեզվի ամբիոն հիմնելու մասին է: Փարիզի արևելյան կենդանի լեզուների դպրոցի հիմնադրումից երեք տարի անց՝ դեռևս 1798 թ. դեկտեմբերի 11-ին, պարսկերենի, արաբերենի և թուրքերենի արդեն իսկ գոյություն ունեցող ամբիոններին հավելվեց նաև հայոց լեզվի նորաստեղծ ամբիոն՝ Ֆրանսիա ժամանած հայ լեզվաբան Հակոբ Շահան-Ջրպետյանի (Ջրպետ, 1772—1837) ղեկավարությամբ, որը 1798-ին հաստատվել էր Փարիզում՝ ունենալով անձնական ծանոթություն Նապոլեոն Բոնապարտի հետ: 1801-ին Շահան-Ջրպետյանը հրաժարվեց Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցի հայոց լեզվի ուսուցչի իր պաշտոնից, պատճառաբանելով, որ ֆրանսերենի և ֆրանսիական գրականության իր ոչ բավարար իմացությունը չի կարող լրիվ գոհացնել աշակերտներին, քանի որ այն հնարավորություն չի տալիս հայոց լեզուն մատչելիորեն մատուցել նրանց: Հետագա տարիներին Շահան-Ջրպետյանը խորապես ուսումնասիրեց ֆրանսերենը և 1811-ին վերստին սկսեց ղեկավարել հայոց լեզվի ամբիոնը: 1815-ին գրած իր նամակներից մե-

²⁸ Asiatic Research for Inquiring into the History and Antiquities, the Arts, Sciences and Literature of Asia, 10 vols. L., 1806—1809.—Oriental Collections, Containing Original Essays and Dissertations etc. Illustrating the History and Antiquities, the Arts, Sciences and Literature of Asia, 3 vols. L., 1797—1799.—The Asiatic Annual Register. L., 1799—1811 (սե'ս լ. Сидорченко. Байрон и национально-освободительное движение на Балканах. Л., 1977, с. 18.

²⁹ Byron's Letters and Journals. Ed. by Leslie Marchand. Cambridge, 1974, p. 147, 143.

³⁰ Th. Moore, 1908, p. 329.

կում Շահան-Ջոպետյանը նշում է. «Դպրատուն մեր հաստատեալ է միանգամայն վասն Հայոց, Գաղղիացոց եւ այլ ամենայն ազգաց. զի բազումը յօտար լաշխարհաց եւս, արք երեւելիք, գիտնական արք, քառասնամեայ եւ աւելի եւս, գան աստ առ ի յուսանել, զի լեզու մեր է մին ի հնագոյն ի սուրբ եւ ի մայր լեզուաց, մինչեւ զարմացուցանէ զգիտունս թէ քանի հնագիտութիւնս, արմատս նախնական լեզուի աշխարհիս եւ զայլ անսգիւտ տեղեկութիւնս զվաւեմի պատմութեանց եւ զծագմանէ ազգաց՝ քաղեալ գտանեն իբր անփորձ հանք կամ անտաշ գոհարա՞ն։ Ուրեմն, հայոց լեզվի ամբիոնը կազմակերպվել է ոչ միայն ֆրանսիացիների, այլև բոլոր ազգերի համար։ Դպրոց են սկսել հաճախել տարբեր ազգերի ներկայացուցիչներ, որոնց թվում եղել են նույնիսկ քառասունն անց գիտնականներ։ Նկել են ուսումնասիրելու մի լեզու, որը հնագույններից մեկն էր մայր լեզուների մեջ։ Ուսումնասիրելով հայոց լեզուն իբրև մի «անխառն գոհար», նրանք հազվագյուտ և եզակի տեղեկություններ են քաղել ազգերի ծագման և հին պատմության վերաբերյալ։

1811-ին Շահան-Ջոպետին հարողովում է բավական թվով աշակերտներ հավաքել իր շուրջը։ Նա իր դասավանդումը սկսեց քսան աշակերտով, որոնցից հինգը միայն կարողացան ավարտել ուսումը։ Դրանցից երեքը՝ Ա.—Ժ. Սեն-Մարտենը (1791—1832), Վ. Ֆլորիվալը (1800—1862) և Մ. Բելլոն հետագայում դարձել են անվանի հայագետներ, որոնց ուսումնասիրությունների հսկայական ժառանգությունը նշանակալից դեր է խաղացել ինչպես ֆրանսիական, այնպես էլ եվրոպական հայագիտության զարգացման մեջ։ Հենց այդ ֆրանսիացի հայագետներին ի նկատի ունենալով Բայրոնը, երբ 1817 թ. հունվարի 2-ի նամակում՝ հասցեագրված Զ. Մըրրեյին, գովեստով խոսելով Միխայիլ Բարատինսկի մասին, նշում է. «Նրանք այստեղ ներկայացնում են մի շատ հարգելի և ուսումնասիր միաբանություն, և դեռ Բոնապարտի օրոք ֆրանսիացի մի քանի գիտնականներ մեծ եռանդով ձեռնամուխ են եղել նրանց լեզվի ուսումնասիրությանը»³¹։

Հայ-անգլիական գրական առնչությունների պատմության մեջ նշանակալի տեղ են գրավում նաև հայագիտության ասպարեզում Բայրոնի կատարած ուսումնասիրությունները։ Վիստոն եղբայրներից հետո անգլիական իրականության մեջ Բայրոնն էր, որ սկսեց զբաղվել հայոց լեզվի և հայ մշակույթի ուսումնասիրությամբ։

Բայրոնի նամակներից ակնհայտ է դառնում նրա խոր հարգանքը և համակրանքը հայոց լեզվի նկատմամբ։ Իր խոստովանությամբ դա «...մի հարուստ լեզու է», արժանի մանրազնին ուսումնասիրության, որի ընթացքում «լիովին փոխհատուցվում են սովորողի շարժարանքները»³², 1816 թ. դեկտեմբերի 18-ի՝ քրոջը՝ Ավգուստա Լիին (1783—1851) ուղղված նամակում Բայրոնը գրում է. «Ամեն առավոտ գնում եմ հայկական վանք (հայերեթի, փոքրիկս, ոչ միաճեղճեթի) լեզու սովորելու, նկատի ունեմ հայոց լեզուն»³³։

1817-ին, ինչպես վերը նշվեց, Հարություն Ավգերյանը և Բայրոնը միացյալ ջանքերով հրապարակում են անգլերեն-հայերեն քերականության ձեռնարկը՝ հայերի օգտագործման համար։ Դեռևս 1816 թ. դեկտեմբերի 24-ին Թոմաս Մուրին ուղղված նամակից տեղեկանում ենք. «Առավոտները մակուկով գնում եմ Ս. Ղազար վանքի հայրերի հետ հայերեն թոթովելու և օգնելու նրանցից մեկին»³⁴ անգլերենը ուղղելու անգլերեն-հայերեն քերականության

31 Ա. Աբրահամյան. Շար հայ կենսագրության. Կ. Պոլիս, 1893, էջ 37։

32 Th. Moore, 1908, p. 336.

33 Նույն տեղում, էջ 329։

34 The Letters of George Gordon, 6th Lord Byron. Selected by R. G. Howarth, with an Introduction by André Maurois. Published in London and Toronto by J. M. Dent and Sons Limited. And in New York by E. P. Dutton, 1933, p. 169.

35 Խոսքը Հ. Ավգերյանի մասին է։

մեջ, որը շուտով հրատարակվելու էր³⁶։ Բանաստեղծը, կարծես թե փոխա-տուցման համար, առաջարկում է իր ուսուցչին հրատարակել այն իր միջոց-ներով, ինչպես նաև հոգում, որ այն տարածում գտնի։ Այդ մասին նա գրում է Անգլիայում գտնվող իր ընկերներին, գովեստով խոսում Ավգերյանի տա-ղանդի և գիտելիքների մասին, կրկին իր հիացմունքը հայտնում Մխիթար-յանների գործունեության վերաբերյալ։ «Մեկ այլ ծրարով ուղարկում եմ Ձեզ մի քանի թերթ անգլերեն-հայերեն քերականությունից՝ հայերի օգտագործման համար,—գրում է Բալրոնը Զոն Մըրրեյին 1817 թ. հունվարի 2-ի նամա-կում,—որի հրատարակմանը ես իրոք խթանել և աջակցել եմ։ (Այն ինձ վրա նստեց ընդամենը հազար ֆրանկ՝ ֆրանսիական լիվր)։ Դեռ շարունակում եմ հայոց լեզվի դասերս, ճիշտ է ոչ բուն առաջադիմությամբ, բայց և օրեցօր եղածին մի բան ավելացնելով։ Հայր Պասկալը իմ աննշան օգնությամբ (նրա իտալերեն անգլերենի եմ թարգմանում) շարունակում է պատրաստել հա-յերեն-անգլերեն քերականության (անգլիացիների համար) ձեռագիրը, որը նույնպես կտպագրվի, երբ ավարտվի։

...Երբ այս քերականությունը (ես նկատի ունեմ այժմ տպագրվողը) սյա-տաբար լինի, չե՞ք առարկի, արդյոք, վերցնել քառասուն կամ հիսուն օրինակ, որոնք հինգ կամ տասը գինեյից ավելի չեն արժենա և դրանց վաճառքով շար-ժել ուսյալների հետաքրքրությունը³⁷։

Հարություն Ավգերյանը անգլերեն-հայերեն քերականության վերաբեր-յալ իր «ինքնապատում օրագրության» մեջ գրում է. «Զկնի ուսանելույ զվերծանութիւն տառից՝ ասաց ցվարժապետ իւր տալ տպագրել իւրովք ծա-խիւք զԱնգղիական և զՀայերէն քերականութիւն իւր... և ինքն ևս սրտագրէր ընդ նմա զթերթս տպագրութեանն»³⁸։

1819-ին Ավգերյանն ու Բալրոնը ձեռնամուխ են լինում հայերեն-անգլե-րեն քերականության ձեռնարկի հրատարակմանը՝ անգլիախոս ուսանողության համար։ Սա այն ձեռնարկն էր, որի մասին Բալրոնը ակնարկում է դեռևս 1817 թ. մարտի 25-ին Զ. Մըրրեյին հասցեագրված նամակում. «...Մյուսը դեռևս ձեռագիր միճակում է»³⁹։ Հարություն Ավգերյանի խնդրանքով Բալրոնը հայերեն-անգլերեն քերականության ձեռնարկի համար մի առաջաբան է գրում։ «Երբ 1816-ին ժամանեցի Վենետիկ... ես նույնպես,—գրում է Բալրոնը այդ առաջաբանում,—շատ ճանապարհորդների նման, խիստ տարված էի Ս. Ղա-րաբ վանքի միաբանությամբ, որը միավորում է կղերական հաստատության բոլոր առավելությունները, առանց նրա մոլորություններից որևէ մեկի...

Այս մարդիկ,—այնուհետև շարունակում է իր միտքը բանաստեղծը Մխի-թարյանների մասին,—մի հարստահարված և բարձրատոհմ ազգի կրոնավոր-ներ են, ազգ, որը հրեաների և հույների պես տարագիր ու ստրուկ է եղել՝ առանց առաջինների ինքնամեկուսացման և վերջինների ստրկամտության։ Այս ժողովուրդը հարստացել է առանց կեղեքելու և ստրկության մեջ արժանա-ցել պատվի առանց բանասարկության։ Բայց նրա տեղը այնուամենայնիվ եր-կար ժամանակ եղել է «գերության տան» մեջ, որ վերջերս բազմապատկել է իր անթիվ օթևանները։ Թերևս դժվար լինի գտնել մի ազգի տարեգրություն, որն ավելի զերծ լինի արատավորող ոճիրներից, քան հայերինը, որոնց առա-ջինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ արատները՝ բռնա-դատման հետևանք։ Սակայն ինչպիսին էլ լինեն նրանց ճակատագիրը, որը դառն է եղել, ինչպիսին էլ լինի այն ապագայում, նրանց երկիրը հավետ պի-տի մնա աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը, և թերևս նրանց լե-զուն ավելի խորը ուսումնասիրության պահանջ է դնում՝ ավելի գրավիչ դառ-

³⁶ Th. Moore, 1908, p. 330.

³⁷ Նույն տեղում, էջ 336։

³⁸ Ղ. Տայան. նշվ. աշխ., էջ 136։

³⁹ Th. Moore, 1908, p. 346.

նախու համար: Եթե վստահենք ս. Գրքին, դրախտը Հայաստանում էր, Հայաստան, որն իր հողի վաղանցուկ առնչակցության պատճառով Ադամի սերունդների պես թանկ վճարեց մի մարդու երջանկության դիմաց, որն իր փոշուց էր ստեղծված: Հայաստանում էր, որ ջրհեղեղը սկսեց տեղի տալ և իջավ աղավնին: Բայց դրախտը դեռ չէր հասցրել անհետանալ, երբ ծայր առավ այդ երկրի տարաբախտությունը, քանզի երկար ժամանակ հզոր թագավորություն լինելով հանդերձ, համարյա երբեք անկախ չեղավ և պարսից սատրապները, և թուրք փաշաները նմանաբար անապատ դարձրին այն երկիրը, ուր աստված մարդուն ստեղծել էր իր իսկ պատկերով⁴⁰: Մտքի և հոգու խորաթափանց ընկալումով, մեծ ջերմությամբ են տոգորված այս տողերը՝ հայ ժողովրդի, նրա հոգևոր գանձերի և դառ ճկատագրի մասին: Բանաստեղծը Մխիթարյան հայրերի մեջ չի տեսել լոկ կրոնավորների: Նա հիացել է կղերական այս հաստատության իրենց ազգի համար կատարած հսկայական օգտակար աշխատանքով: Քաղաքական նկատառումներից ելնելով Մխիթարյանները յուրյան են չհրապարակել այդ առաջաբանը: Դրա հետևանքը եղավ այն, որ Բայրոնի ոչ մի հաշտության ու զիջումի չգնացող խռովահոյզ հոգին ըմբոստացավ այս անգամ արդեն օրյեկտիվ պատճառների դեմ: Բանաստեղծը վիրավորվեց և դադարեցրեց իր այցելությունները Ս. Ղազար:

Վերոհիշյալ առաջաբանի, ինչպես նաև հայերեն-անգլերեն քերականության ձեռնարկի մասին Հարություն Ավգերյանը նույնպես հիշատակում է իր «Ինքնապատում օրագրության» մեջ. «Ապա յորդորեաց զնա յօրինել միւս ևս քերականութիւն Հայերէն և Անգղիական յօգուտ ազգայնոց իւրոց: Եւ նա արար զայն շարադրեալ զկանոնսն յիտալական բարբառ. զորս եյեղ նա յԱնգղիականն:—Ձկնի աւարտման քերականութեանն թարգմանեաց նա ի Լատին բարբառոյ զերկոսին երրորդ թուղթս Սրբոյն Պօղոսի առ Կորնթացիս, և հատուածս ինչ բանից ի մերոց նախնեաց ձեռնտուութեամբ վարժապետի իւրոյ, զորս և կամէր զնել ի քերականութեան անդ ի կրթութիւն անգղիացւոց: Ապա ի խնդրոյ Վառժապետի իւրոյ յօրինեաց նա զՅառաջաբանութիւն այնը քերականութեան յԱնգղիական բարբառ. ալլ քանզի երգիծանէր նա ի նմա զՏաճիկս և զՊարսիկս, չկամեցաւ հ. Յարութիւն տպագրել զայն: Եւ նա թէպէտև խոստացավ յօրինել միւս ևս անվնաս, բայց անդէն լքաւ սիրտ նորա... եւ այնպէս մնաց քերականութեան գրչագիր, և ինքն ո՛չ ետ զխոստացեալ դրամօն վասն տպագրութեան սորին»⁴¹:

Թուրքերի և պարսիկների հասցեին ասված սուր խոսքերի պատճառով վերոհիշյալ առաջաբանը դեռևս երկար ժամանակ մնաց անտիպ: Հետագայում Թումաս Մուրը գտավ այն բանաստեղծի թղթերում և առաջին անգամ հրատարակեց նրա մահվանից վեց տարի անց՝ 1830-ին Լոնդոնում լույս ընծայված «Լորդ Բայրոնի կյանքը, նամակները և օրագրերը» խորագրով գրքում: Դրանից հետո միայն այն թարգմանվեց Մխիթարյանների կողմից և առաջին անգամ հայերեն լույս տեսավ «Ծաղկաքաղ քերթողաց անգղիացւոց» գրքում⁴² 1852-ին՝ «Ի թղթոց Լորտ Պայրոնի» խորագրով:

Այս առաջաբանը դեռևս անցյալ դարում թարգմանվել է նաև Ֆրանսերեն և ռուսերեն: Այսպես, եվրոպացի անվանի հայագետ Գ. Ա. Շրոմպֆի (1844—1892) հանրահայտ գրքից, ուր տեղ են գտել Բայրոնի՝ հայերին վերաբերող նամակները և վերոհիշյալ առաջաբանը, տեղեկանում ենք, որ դրանք թարգմանվել են Ֆրանսերեն դեռևս XIX դարի 30-ական թթ. սկզբին⁴³: Այսինքն, փաստորեն այդ հանրահայտ առաջաբանը Ֆրանսերեն թարգմանվել և հրատարակվել է ավելի շուտ, քան հայերեն:

1889-ին, գիմնազիայի յոթերորդ դասարանի շրջանավարտ Յուրի Վեսնյովսկին, որը հետագայում դարձավ ռուս անվանի գրաքննադատներից մեկը,

40 Նույն տեղում, էջ 336, 337:

41 Ղ. Տալան. Նշվ. աշխ., էջ 136:

42 «Ծաղկաքաղ քերթողաց անգղիացւոց» (հայերեն և անգլերեն). Վենետիկ, Ս. Ղազար, 1852, էջ IV—IX:

43 Գ. Շրոմպֆ. Նշվ. աշխ., էջ 339—347:

իր առաջին արտասահմանյան ուղևորության ժամանակ այցելում է Վենետիկի Մխիթարյան միաբանություն: Նրա տպավորությունները տեղ են գտել «Բայրոնը Ս. Ղազար կղզում» ակնարկում, որը լույս է տեսել 1893-ին «Семья» ամսագրում⁴⁴, իսկ 1894-ին՝ Հ. Մելքոնյանցի թարգմանությամբ «Հանգես գրականական և պատմական»⁴⁵ ամսագրում: Այդ ակնարկում տեղ է գտել նաև Բայրոնի հայտնի առաջաբանը, որը անգլերենից ռուսերեն է թարգմանել Յու. Վեսելովսկու մայրը՝ Ռուսական խոսքի սիրողների ընկերության անդամ, «Русские ведомости» հանդեսի աշխատակցուհի, բազմաթիվ գրական ստեղծագործությունների հեղինակ, տաղանդավոր թարգմանչուհի Ալեքսանդրա Ադոլֆովնա Վեսելովսկայան (1840—1910):

Ս. Ղազար կղզում կայացած հանդիպումները մեծ ազդեցություն ունեցան Բայրոնի վրա և 1823-ի հուլիսին նա, նախքան Հունաստան մեկնելը, վերջին անգամ այցելում է իր հայ բարեկամներին: Շատ հուզիչ է եղել բանաստեղծի բաժանումը Մխիթարյաններից: Երբ բանաստեղծի մակույկը հեռացել է տեսադաշտից, Հարություն Ավգերյանը և Սուրբաս Սոմալյանը, այս «երկու ալեփառ ծերունիներն իրարու երես նայեցան... մեկնած էր ան, զոր տարին երով սիրած էին իրենց անառակ որդոյն պես. ան պիտի մեկնեի դեպի Արևելք... և երկուքին ալ աչքերեն զույգ մը արցունքի կաթիլներ գլորեցան ու տղու պես լացին»⁴⁶:

Իտալիայից մեկնելով Բայրոնը իր հետ տարավ ջերմ տպավորություններ և հիշողություններ հայ նշանավոր մարդկանց հետ ունեցած հանդիպումներից ու զրույցներից: Դժվար է հավանաբար հիշատակել եվրոպացի մի այլ բանաստեղծի, որ մինչ Բայրոնը այդքան սերտ անձնական առնչություն ունենար հայ իրականության հետ:

Այստեղ տեղին է նշել, որ բանաստեղծը բառացիորեն ապրում էր բոլոր տառապած ու տանջված ժողովուրդների ու ազգերի՝ հայ, հույն, իսպանացի, իտալացի, դառը ճակատագրով: Եվ պատահական չէ, որ նա որոշում է ընդունում մասնակցելու հույն ժողովրդի ազատության համար մղվող սրբազան պայքարին: «Բոլորն ասում են, որ ես կարող եմ շատ օգտակար լինել Հունաստանին: Ո՛չ ես, ո՛չ էլ նրանք չգիտեն, թե ինչպես, բայց համենայն դեպս փորձենք»⁴⁷,—խոստովանում է Բայրոնը: Նա մեկնում է Հունաստան որպես ազատագրական պայքարի զինվոր, ժամանակակիցների վկայությամբ՝ դեռ առաջին օրերից ցուցաբերելով արտակարգ արիություն, ինքնատիրապետում և նվիրվածություն:

Իր կյանքի ուղին բանաստեղծն ավարտում է թուրքերով շրջապատված Միսոլոնգի⁴⁸ քաղաքում, հունական ապստամբների ջոկատում՝ որպես ճնշված ժողովրդի ազատագրության համար մղվող պայքարի հերոս և մարտիկ: Նա ունեցավ կարճատև կյանք, բայց հարատև անում:

Եվ նա, ով զոհվի պայքարում արի,
Անունն իր նախնյաց փառքին գումարի,
Նա ահ կդառնա բռնության համար
Եվ որդիների հույս-հավատն անմար,
Որ կնախընտրեն մահանալ հպարտ,
Քան ապրել կյանքով մի ամոթապարտ...⁴⁹

⁴⁴ Ю. Веселовский. Байрон на острове св. Лазаря.—Семья, 1893, № 54; с. 2—4, № 55, с. 2—4.

⁴⁵ Յու. Վեսելովսկի. Բայրոնը Մխիթարյանների մոտ.—«Հանդես գրականական և պատմական», 1894, Գիրք 5, էջ 157—174:

⁴⁶ Ռ. Որբերյան. Լորտ Պայրեն (ի Ս. Ղազար).—«Բազմավեպ», 1932, № 6—7, էջ 272:

⁴⁷ Thomas Medwin. Journals of the Conversations of Lord Byron noted during the years 1821—1822. V. 2, Paris, 1825, p. 175.

⁴⁸ Միսոլոնգի (Մեսոլոնգիոն), քաղաք Արևմտյան Հունաստանում:

⁴⁹ Բայրոն. Երկերի ժողովածու, Երևան, 1965, էջ 250 (թարգմ. Վ. Դավթյան):

БАЙРОН И МХИТАРИСТЫ

(К 200-летию со дня рождения великого поэта)

А. А. БЕКАРЯН

Резюме

В эпистолярном наследии Байрона особое место занимают страницы, посвященные армянам и армянской культуре. Благодаря письмам Байрона английский читатель впервые ознакомился с научной и просветительской деятельностью Конгрегации мхитаристов Венеции—крупного арменоведческого центра. Вдали от родины, уставший от европейской цивилизации, поэт сближается с мхитаристами, высоко оценивает их цели и начинания, восхищается их древнейшим языком, литературой и историей. Здесь же, в монастыре св. Лазаря, мечтая проникнуть в тайны восточной поэзии, он начинает изучать армянский язык. Три года (1816—1818), проведенные Байроном в Венеции, стали для него, благодаря мхитаристу Авгеряну, периодом плодотворного научного сотрудничества. Авгерян и Байрон совместными усилиями подготовили и издали пособия англо-армянской, армяно-английской грамматик и англо-армянский словарь. Некоторые переводы из армянских летописей, сделанные Байроном, вместе с отрывками из его писем и другими представляющими определенную ценность документами мхитаристы опубликовали в 1870 г. Байрон видел в мхитаристах не только духовных лиц, он восхищался огромной работой Конгрегации на благо своей нации.